

ԵԱՀԿ ներկայացուցչին մտահոգել է ilur.am-ի խմբագրի դեմ հարուցված քրեական գործը



Մամուլի ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցիչ Դունյա Միլյատովիչ, արխիվ

Միբանույշ Գեորգյան

Հրապարակված է՝ 16.07.2015

Մամուլի ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցիչ Դունյա Միլյատովիչը մտահոգություն է հայտնել ilur.am կայքի խմբագիր Քրիստինե Խանումյանի դեմ հարուցված քրեական գործի առնչությամբ:

Խանումյանը [մեղադրվում է](#) «Իլուր» կայքում հրապարակված տեղեկատվության աղբյուրը դիտավորությամբ չբացահայտելու, կամ ավելի ստույգ՝ աղբյուրը բացահայտելու մասին դատական ակտը դիտավորյալ չկատարելու մեջ: Քրիստինե Խանումյանի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը:

«Լրատվամիջոցների ներկայացուցիչները չպետք է պատասխանատվության կանչեն հանրությանը հետաքրքրող տեղեկատվությունը հրապարակելու ու տարածելու համար», - այսօր ՀՀ արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանին ուղղված նամակում գրել է Միլյատովիչը. - «Եթե այդ տեղեկատվությունը օրենքով չի համարվում գաղտնի՝ ազգային անվտանգության նկատառումներով կամ այլ գերակա շահերի պաշտպանության համար, պետությունը պետք է լիակատար պաշտպանություն ապահովի՝ ընդդեմ լրագրողի աղբյուրը բացահայտելուն ուղղված ցանկացած իրավական կամ վարչական սանկցիայի»:

«Այս սկզբունքը անկախ լրագրության և ազատ մամուլի հիմնական պահանջներից մեկն է», - շեշտել է ԵԱՀԿ-ի ներկայացուցիչը՝ հույս հայտնելով, որ իրավապահ մարմինները կփակեն Խանումյանի դեմ հարուցված գործը:

Տե՛ս կայքում՝ <http://www.azatutyun.am/content/news/27132044.html>